



USAID
FROM THE AMERICAN PEOPLE



AFIC

COUNTERPART
INTERNATIONAL



ԳՈՐԾԱՐԱՐԻ ՉԱՅՆ

Դեկտեմբեր-2011

Իրադարձություններ/Նորություններ/Հայտարարություններ /Հոդվածներ/Օրենսդրական փոփոխություններ
ԻՐԱԳԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ **ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**



**«Գործարար շահերի պաշտպանության ցանցի»
«կլոր-սեղան» քննարկում**

Ս.թ. դեկտեմբերի 22-ին, Առևտրա-արդյունաբերական պալատի նիստերի դահլիճում տեղի ունեցավ «Գործարար շահերի պաշտպանության ցանցի» հերթական «կլոր-սեղան» քննարկումը՝ նվիրված Հայաստանում հարկային ոլորտի օրենսդրական փոփոխություններին: Քննարկմանը, բացի Գործարար շահերի պաշտպանության ցանցի անդամներից, ներկա էին նաև գործարար հանրության այլ ներկայացուցիչներ:

Փոփոխությունները ներկայացրեց ՀՀ Ֆինանսների նախարարության Պետական եկամուտների քաղաքականության և վարչարարության մեթոդաբանության վարչության պետի տեղակալ Արման Պողոսյանը: Նա հանգամանորեն ներկայացրեց մի շարք օրենքներում տեղ գտած փոփոխություններն ու լրացումները և պատասխանեց մասնակիցների հարցերին: Հաշվի առնելով օրենսդրական փոփոխությունների կարևորությունը և ծավալուն բնույթը, ինչպես նաև քննարկման մասնակիցների արձագանքները, պայմանավորվածություն ձեռք բերվեց կազմակերպել այս թեմայով ևս մեկ քննարկում 2012թ. հունվարին:



*«Գործարար շահերի պաշտպանության ցանցի»
«կլոր-սեղան» քննարկում*

Սերտիֆիկացումը սահմանի վրա վերացվում է

*Վարչապետը տեղական ապրանք արտադրողներին
է ներկայացրել Հայաստանի արդյունաբերական
քաղաքականության ռազմավարությունը*

*2012թ.-ին ՓՄՁ-ի ֆինանսավորման ծավալը
կհասցվի շուրջ 5 մլրդ դրամի*

*Մաքսային համակարգը խոչընդոտ է
էկեկտրոնային առևտրին*

*«Կանխիկ գործառնությունների սահմանափակման
մասին» օրենքը 3 տարի անց նորից վերադարձել է
խորհրդարան*

Դրամաշնորհի՝ գիյոտիինի համար

*Հայաստանը պետք է սկսի սեփական դեղերի
արտադրությունը. Վազգեն Մաֆայան*

*Կառավարության նոր ռազմավարությունը ոգևորել
է հայրենական ապրանքարտադրողներին*

*Կառավարությունում քննարկվել է Հայաստանի
տնտեսական զարգացման նոր
քաղաքականությունը*



ՀՀ կառավարությունն իր նախկին որոշումներից մեկում այսօր կատարել է փոփոխություն, ուժը կորցրած ճանաչել մեկ այլ որոշում, ինչը բխում է կառավարության որդեգրած քաղաքականությունից, այն է՝ Հայաստանում գործող տեխնիկական կանոնակարգումն աստիճանաբար մոտարկել Եվրամիության գործող հանձնարարականներին:

Այս նպատակով հանրային սննդի ծառայությունը հանվել է պարտադիր արտոնագրման ենթակա ցանկից: Վարչապետ Տիգրան Սարգսյանը հանձնարարել է այս որոշումը ներկայացնել ՋԼՄ-ներին, որպեսզի բոլոր ձեռնարկատերերն իմանան, որ սերտիֆիկացումը սահմանի վրա վերացվում է: «Սա էական բարելավում է լինելու արտահանողների և ներմուծողների համար, - ասել է Տիգրան Սարգսյանը: - Ըստ էության սա «գիյոտինի» աշխատանքի սկիզբն է: Վերահսկիչ պալատի ներկայացրած տվյալները վկայում են, որ «գիյոտինի» ինստիտուտը լուրջ անելիք ունի Հայաստանում: Բազմաթիվ այսպիսի արհեստական գործառույթներ, որոնք բովանդակային առումով բացարձակապես չեն նպաստում սննդի անվտանգության բարձրացմանը, ստեղծում են կոռուպցիոն ռիսկեր, բյուրոկրատական քաշքշուկ, վատթարացնում բիզնես միջավայրը: Այս օրինակը վկայում է, որ մենք լուրջ անելիք ունենք «գիյոտինի» մասով: Արդեն Ավստրիայի կառավարության գրանտը՝ 500 հազար եվրոն, ստացել ենք, որը հնարավորություն է տալու, որպեսզի այդ կառույցը մեծ թափով աշխատի»:

22.12.2011
hetq.am

Վարչապետը տեղական ապրանք արտադրողներին է ներկայացրել Հայաստանի արդյունաբերական քաղաքականության ռազմավարությունը

Վարչապետ Տիգրան Սարգսյանն այսօր մասնակցել է Հայրենական ապրանք արտադրողների միության ընդլայնված նիստին:

Ողջունելով մասնակիցներին՝ վարչապետ Սարգսյանը նշել է. **«Արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականությունից բխող բոլոր որոշումներն իրականացվելու են կառավարություն-մասնավոր հատված համագործակցությամբ ստեղծվող վարչապետին կից խորհրդի համակողմանի քննարկումների արդյունքում: Ձևավորելու ենք մասնավոր հատվածի հետ համագործակցության նոր պլատֆորմ, որի միջոցով էլ ապահովվելու ենք մեր որոշումների լեգիտիմությունը: Վարչապետին կից խորհրդի կազմում ընդգրկված են լինելու մասնավոր հատվածի, տարբեր ստոյիացիաների ներկայացուցիչներ, փորձագետներ»:**

Կառավարության ղեկավարն ընդգծել է, որ մեր երկրի անկախ պատմության մեջ առաջին անգամ է հաստատվում նման ծրագիր, որում սահմանվել են այն ճյուղերը, որոնք ունեն մտավոր և արտահանման ներուժ, որոնք կարող են էպես ավելացնել իրենց արտադրական ծավալները: **«Այս ռազմավարությունը մի նոր էջ է մեր երկրի տնտեսական պատմության մեջ: Պետությունը պատասխանատվություն է վերցնում ըստ ճյուղային կառուցվածքի օժանդակել մասնավոր հատվածին՝ ավելացնելու իրենց արտադրական ծավալները և նպաստելու արտահանմանը: Արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականությունը մշակվել է երկու տարվա ընթացքում՝ միջազգային կազմակերպությունների փորձագետների հետ համատեղ: Արդյունաբերական քաղաքականության ուղղակի թիրախը վերամշակող արդյունաբերության ճյուղերի և համալիրների զարգացումն է»:**

Նշենք, որ ռազմավարության մեջ ներառված են արդյունաբերության 11 ճյուղեր՝ կոնյակագործություն, ադամանդագործություն, ոսկերչություն, ժամագործություն, տեքստիլ արդյունաբերություն, դեղագործություն և բիոտեխնոլոգիաներ, պահածոների արտադրություն, գինեգործություն, շշայլված հանքային ջրերի, հյույթերի արտադրություն և ճշգրիտ ճարտարագիտություն: Ըստ այս ճյուղերի՝ ռազմավարությամբ բացահայտվել է մեր երկրի արդյունաբերական ներուժը, գնահատվել, թե ինչպիսի հումքային, մտավոր և ենթակառուցվածքային ռեսուրսներ կան հանրապետությունում: Կոնյակագործության, դեղագործության և ճշգրիտ սարքաշինության ոլորտներում զարգացման ծրագրերն արդեն իսկ մշակվել են մասնավոր հատվածի հետ միասին: Մյուս ճյուղերում առաջիկայում ևս կքննարկվեն զարգացման և արտահանման հստակ ծրագրեր: Ռազմավարությամբ առաջնայնություն կտրվի մասնավոր հատված-պետություն համագործակցությանը: Օրագրվում է, որ եռամսյա ժամկետում ՀՀ կառավարության հաստատմանը կներկայացվի ճշգրիտ ճարտարագիտության, դեղագործության և կոնյակագործության ոլորտային ռազմավարությունների իրականացումն ապահովող միջոցառումների ցանկը:

Իր հերթին հայրենական ապրանք արտադրողների միության նախագահ Վազգեն Սաֆարյանը նշել է, որ միությունը ողջունում է կառավարության՝ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության մշակման նախաձեռնությունը: Մասնավորապես, նա ասել է, որ իրենց սպասելիքներն այս հարցում լիովին արդարացել են, և տեղական ապրանք արտադրողները գոհունակություն են հայտնում ռազմավարության մշակման կապակցությամբ: Նրա խոսքով՝ միության ներկայացուցիչները պատրաստ են մասնակցել

արդյունաբերական քաղաքականությունից բխող գործողությունների իրականացման աշխատանքներին՝ հանդես գալով լրացուցիչ առաջարկություններով և նախաձեռնություններով:

19.12.2011
gov.am

2012թ.-ին ՓՄՁ-ի ֆինանսավորման ծավալը կհասցվի շուրջ 5 մլրդ դրամի

ՀՀ կառավարության այսօրվա նիստում հավանության արժանացավ 2012 թվականի Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության ծրագիրը, որի նպատակն է ապահովել երկրի տնտեսական աճի կայունությունը՝ տնտեսությանը հաղորդելով նորարարական ուղղվածություն և ճկունություն:

Ինչպես նշեց ՀՀ էկոնոմիկայի նախարար Տիգրան Դավթյանը, ՓՄՁ-ի սուբյեկտների ուղղակի վարկավորման և կապիտալի ֆինանսավորման ծրագրերով 2012թ.-ի ընթացքում ակտիվորեն կշարունակվեն ՓՄՁ-ի սուբյեկտների ֆինանսավորման գործընթացը՝ տարբեր ճանապարհներով ֆինանսավորման ծավալը հասցնելով շուրջ 5 մլրդ դրամի:

Ընդհանուր առմամբ՝ 2012-ին սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցության ծրագրի շրջանակներում նախատեսվում է աջակցության ցուցաբերում առնվազն 150 սկսնակ գործարարի՝ ապահովելով շուրջ 25 նոր գրանցված կազմակերպություններ, շուրջ 50 նոր ստեղծված աշխատատեղեր հանրապետության մարզերում:

16.12.2011
Panorama.am

Մաքսային համակարգը խոչընդոտ է էլեկտրոնային առևտրին

Հայաստանում բիզնեսի արդյունավետության բարձրացման կարևոր գործիքներից մեկը էլեկտրոնային առևտրի զարգացումն է: Այդ մասին այսօր՝ դեկտեմբերի 10-ին Դիլիջանում «S2S լիդերներն առանց փողկապների հանդիպման» ժամանակ հայտարարեց ՀՀ էկոնոմիկայի նախարարի խորհրդական Վահե Դանիելյանը:

Նրա խոսքով՝ էլեկտրոնային առևտրի խնդիրները հիմնականում 3 տեսակի են՝ մաքսային, հարկային և վճարահաշվարկային: Օրինակ՝ մաքսային համակարգում խոչընդոտ կարելի է դիտարկել մաքսային միջնորդական ծառայությունների սակագինը: Այսպես՝ բրոքերային ծառայությունների արժեքը միջին հաշվով մոտ 50 հազար դրամ է, այնինչ շատ դեպքերում էլեկտրոնային առևտրով սահմանը հատում են ցածրարժեք ապրանքներ: Ստացվում է՝ մարդը 20 հազ. դրամի ապրանք է ներմուծում, բայց 50 հազար դրամ վճարում է բրոքերային ծառայությանը: Խնդիր կա նաև բրոքերային կազմակերպության որակավորման (հավաստագրման) հետ կապված: Վ. Դանիելյանը նաև մաքսային վճարների վերանայման անհրաժեշտություն է տեսնում: Մեկ այլ խնդիր էլ առաջացել է այն պատճառով, որ online առևտրի դեպքում միայն 1-2 ընկերության կապուլի է միանում ՊԵԿ-ի պրոցեսինգային կենտրոնին, հետևաբար՝ առաջանում է մենաշնորհ, ու այդ ծառայության շատ բարձր վարձ է սահմանված:

Կլոր սեղանին մասնացող ՊԵԿ ներկայացուցիչ Ռաֆայել Գրիգորյանն առարկեց բրոքերների որակավորման մասին առաջարկությանը, ասելով, թե խնդիրը չափազանցված է: Նրա կարծիքով՝ մաքսային միջնորդի որակավորման հարցն ընդհանրապես պետք է հանել օրակարգից, իսկ էլեկտրոնային առևտրի խոչընդոտները բոլորովին այլ հարթության վրա են: Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության նախագահ Հովհաննես Ավոյանն ասաց, որ ներկայում, քանի դեռ էլեկտրոնային առևտրով ներմուծված ապրանքների քանակը մեծ չէ, հարկային ու մաքսային խոչընդոտները դեռևս էական դեր չեն խաղում, սակայն առաջիկա տարիներին հնարավոր է էլեկտրոնային առևտրի աճ, իսկ այդ դեպքում մաքսային ընթացակարգերի դյուրինացումը հրատապ կդառնա:

10.12.2011
news.am

«Կանխիկ գործառնությունների սահմանափակման մասին» օրենքը 3 տարի անց նորից վերադարձել է խորհրդարան

«Կանխիկ գործառնությունների սահմանափակման մասին» օրենքի նախագիծը ներկայացվել է խորհրդարանի քննարկմանը: Դեռևս 2008թ. մշակված նախագիծը վերանայումների երկար ճանապարհ է անցել:

Ըստ նախագծի՝ 2012 թ. հուլիսի 1-ից ֆիզիկական անձանց միջև ապրանքների (գույքի) օտարման, օգտագործման, աշխատանքների կատարման եւ ծառայությունների մատուցման համար 3 միլիոն դրամը գերազանցող գործարքների վճարումները չեն կարող իրականացվել կանխիկ գումարով:

Այս սահմանափակումը վերաբերում է նաև իրավաբանական անձանց, բացի ֆինանսական հաստիքից՝ բանկեր, վարկային կազմակերպություններ եւ այլն:

Անկանխիկ կրնդունվեն նաև 300 հազ. դրամը գերազանցող բժշկական ծառայությունների համար վճարումները: Կրթական հաստատություններում ուսման համար վճարումն անկանխիկ կրնդունվի՝ անկախ գումարի չափից:

Նախագծով նախատեսվում է նաև վճարային քարտեր սպասարկող սարքերի տեղադրում 200 քառակուսի մետրը գերազանցող ընդհանուր մակերես ունեցող առևտրի, հանրային սննդի օբյեկտներում, հյուրանոցներում, բժշկական կազմակերպություններում: Դրանց տեղադրումը կլինի պարտադիր, իսկ դրանցից օգտվելը՝ ըստ բնակիչների ցանկության: Դրանք կտեղադրվեն 2013 թ. հուլիսի 1-ից Երևանում, 2014 թ. հունվարի 1-ից՝ մարզերի վարչական կենտրոններում, 2015 թ. հունվարի 1-ից՝ հանրապետության բոլոր քաղաքներում:

08.12.2011
news.am

Դրամաշնորհ՝ գիյոտինի համար

Հայաստանի կառավարությունն այսօր՝ դեկտեմբերի 8-ին, համաձայնություն տվեց Հայաստանի կառավարության եւ «Ավստրիայի զարգացման գործակալություն» ՍՊԸ-ի միջև դրամաշնորհային համաձայնագրի կնքման առաջարկությանը: 500.2 հազ. եվրո դրամաշնորհը տրամադրվելու է կարգավորիչ «գիյոտինի» ծրագրի համար:

Նշենք, որ «կարգավորիչ գիյոտինի» նպատակն է կարճ ժամանակահատվածում (6 ամսում կամ 1 տարում) մեծ քանակությամբ նորմատիվային ակտերի վերանայումը եւ «ֆիլտրացումը», որոնք խոչընդոտ են ազատ շուկայի սկզբունքներին:

Գիյոտինի մեթոդը մշակվել է Շվեդիայում՝ 1980 թ.: Կիրառվել է բազմաթիվ երկրներում՝ Իտալիա, Մեքսիկա, Հարավային Կորեա, Հունգարիա, Քենիա, Մոլդովա, Տաջիկստան եւ այլն: Օրինակ՝ Հարավային Կորեան 1 տարում վերանայեց 11 հազ. նորմատիվային փաստաթուղթ, որի կեսը չեղյալ հայտարարվեց: Առավել տարածված է գիյոտինի մեթոդը կիրառել լիցենզիաների եւ տարաբնույթ թույլտվությունների ոլորտներում:

Գիյոտինը որպես կանոն իրականացվում է հետեւյալ սխեմայով. Կառավարությունը նախ որոշում է գիյոտինի նպատակները, այնուհետ գերատեսչություններից պահանջում կարճ ժամանակում ներկայացնել բոլոր այն նորմատիվ փաստաթղթերը, որոնք վերաբերում են գիյոտինին: Այդ փաստաթղթերը 3 տեսակի փորձաքննություն են անցնում՝ կառավարության կողմից լիազորված մարմնի, անկախ փորձագետներ եւ գործարարների կողմից: Ցանկացած փաստաթուղթ, որը նման «ֆիլտրի» կողմից հավանության չի արժանանում՝ կամ չեղյալ է համարվում, կամ պարզեցվում է: Այսինքն՝ հայտարարվում է մի կոնկրետ օր, որիի ժամանակ այդ փաստաթուղթը «գիյոտինի է ենթարկվում»՝ ավտոմատ անվավեր դառնալով:

08.12.2011
news.am

Հայաստանը պետք է սկսի սեփական դեղերի արտադրությունը. Վազգեն Սաֆարյան

Հայաստանը պետք է սկսի այնպիսի դեղերի արտադրությունը եւ արտահանումը, որոնք ստեղծվել են հայ գիտնականների կողմից: Այդ մասին NEWS.am-ին ասաց Հայրենական արտադրողների միության նախագահ Վազգեն Սաֆարյանը:

Նրա խոսքով՝ Հայաստանում դեղերի արտադրությունը զարգացման միտումներ ունի, սակայն դա առավելապես կատարվում է գեներիկ դեղերի (արդեն իսկ հայտնաբերված դեղերի կրկնօրինակները) հաշվին: Վ. Սաֆարյանի տեղեկացմամբ՝ դեռևս խորհրդային տարիներին Հայաստանի նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտը մշակել է 18 անուն դեղամիջոց (կլապտերոն, դիդինիլ, թեոդին, դանգլերոն եւ այլն), որոնք կարելի է ներկայում էլ արտադրել: «Յուրաքանչյուր դեղի մշակումը (գաղափարից մինչև արտադրությունը) խորհրդային տարիներին պահանջում էր 400 մլն ռուբլի ներդրում, ԱՄՆ-ում՝ 800 մլն դոլար էր»,- ասաց Վ. Սաֆարյանը:

Բացի այդ՝ նեոքրիմիայի ինստիտուտում ակադեմիկոս Արմեն Գալոյանը մշակել է նեյրոհորմոնալ կարգավորիչ, որը կարող է մարդուն պաշտպանել բակտերիալ եւ վիրուսային ազդեցություններից:

Հիշեցնենք, որ դեղագործությունն այն 3 ոլորտներից է, որտեղ ՀՀ կառավարությունը մշակել է արտահանման խթանման ծրագիր:

08.12.2011
news.am

Կառավարության նոր ռազմավարությունը ոգեւորել է հայրենական ապրանքարտադրողներին

Կառավարության նոր ռազմավարությունը՝ խթանել արտահանումը, տնտեսական քաղաքականության հեղափոխական եւ սկզբունքային փոփոխություն է: Այդ մասին այսօր՝ դեկտեմբերի 7-ին, լրագրողների հետ հանդիպման ժամանակ հայտարարեց Հայրենական ապրանքարտադրողների միության նախագահ Վազգեն Սաֆարյանը: Նրա խոսքով՝ Հայաստանի նախկին տարիների տնտեսական քաղաքականությունը հիմնվում էր Արժույթի Միջազգային Հիմնադրամի Վաշինգտոնյան կոնսենսուսի վրա, որը սահմանափակում էր պետության միջամտությունը տնտեսական գործընթացների վրա:

Այն հարցին, թե ինչպե՞ս է կառավարությունը պատրաստվում խթանել արտահանումը, Վ. Սաֆարյանը չկարողացավ հստակ պատասխաններ տալ: Արտահայտելով իր կարծիքը՝ Վ. Սաֆարյանն ասաց, որ կառավարությունը պետք է վարկավորի արտահանողներին, եւ պետք է քայլեր ձեռնարկի դրամն արժեզրկելու ուղղությամբ:

Հիշեցնենք, որ Հայաստանի Հանրապետական կուսակցության տնտեսական ֆորումում ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը ներկայացրել է Հայաստանի արդյունաբերական զարգացման ռազմավարությունը, ըստ որի՝ 11 ճյուղերում մշակվելու են արտահանման ընդլայնման ծրագրեր՝ պետություն-մասնավոր սեկտոր համագործակցությամբ: Այս պահին այդպիսի ծրագրեր մշակված են 3 ճյուղերում՝ կոնյակագործություն, դեղագործություն եւ ճշգրիտ սարքաշինություն:

07.12.2011
news.am

Կառավարությունում քննարկվել է Հայաստանի տնտեսական զարգացման նոր քաղաքականությունը

Վարչապետ Տիգրան Սարգսյանի գլխավորությամբ կառավարությունում տեղի է ունեցել քննարկում՝ նվիրված մեր երկրի տնտեսության զարգացման նոր ծրագրի մշակմանը: Միջոցառմանը մասնակցել են Համաշխարհային բանկի, ՀՀ Ազգային Ժողովի խմբակցությունների եւ կառավարության ներկայացուցիչներ:

«Անհրաժեշտ է Հայաստանի համար մշակել մինչեւ 2020 թվականը ներառող տնտեսական նոր ծրագիր՝ իր հիմնական ուղղություններով, գերակայություններով եւ գործողություններով: Հայաստանը մի քանի տարի առաջ արդեն իսկ մշակել էր Կայուն զարգացման ծրագիր, որը ենթարկվել է էական փոփոխությունների՝ համաշխարհային ճգնաժամի արդյունքում», - ասել է Տիգրան Սարգսյանը:

Կառավարության մամուլի ծառայությունից news.am-ին հայտնում են, որ վարչապետը նշել է, որ մեր երկիրն այսօր գտնվում է մրցակցության փուլում եւ մեր առջեւ առկա է խնդիր, թե ինչպես պետք է շարժվենք առաջ եւ ինչպիսի մեթոդաբանությամբ:

«Վերջին 20 տարիներին Հայաստանն աճ է ապրում եւ այն զարգացնելու եւ առաջ տանելու համար պետք է օգտագործել Ձեր երկրի տնտեսական բոլոր առավելություններն ու աղբյուրները, տարբեր ոլորտներում առկա մարդկային ռեսուրսներն ու տնտեսական աճի ներուժը: Ըստ իս, Դուք դա կարող եք անել: Ես Հայաստանի հարցով լավատես եմ, չնայած համաշխարհային մակարդակով զրոքալ անորոշությունների», - նշել է Համաշխարհային բանկի Եվրոպայի եւ Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի Հարավային Կովկասի երկրների դեպարտամենտի տարածաշրջանային տնօրեն Ասադ Ալամը: Նա ասել է, որ ներկայում առկա բազմաթիվ անորոշությունների պարագայում պետք է մշակել ճկուն քաղաքականություն: Կառավարությունը պետք է մի քանի խիզախ միջոցառումների իրականացման որոշում կայացնի եւ նպատակային կերպով շարժվի այդ ճանապարհով: «Անհրաժեշտ է միասնաբար սահմանել Հայաստանի զարգացման նոր տեսլականը: Եթե այդ ծրագրի 50 տոկոսն էլ իրականացվի՝ դա կլինի մեծ քայլ դեպի առաջ», - նշել է

Համաշխարհային բանկի Եվրոպայի եւ Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի Հարավային Կովկասի երկրների դեպարտամենտի տարածաշրջանային տնօրենը:

Տիգրան Սարգսյանը շնորհակալություն է Ասադ Ալամին՝ քննարկմանը մասնակցելու եւ մեր երկրի տնտեսական ապագայի մասին միջազգային փորձի եւ նոր գաղափարների ներկայացման համար:

02.12.2011
news.am

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ

Սույն տեղեկագրի թողարկումը հնարավոր է դարձել իրականացնել Քաունթերփարթ Ինթերնեշնլի Հայաստանյան ներկայացուցչության կողմից իրականացվող Քաղաքացիական հասարակության և տեղական ինքնակառավարման աջակցության ծրագրի , և ԱՄՆ բնակչության առատաձեռն աջակցության շնորհիվ: Տեղեկագրի բովանդակությունը, արտահայտված տեսակետները և կարծիքները պատկանում են Օտարերկրյա Ներդրումների և Համագործակցության Առցիացիային, և հնարավոր է, որ չհամընկնեն Քաունթերփարթ Ինթերնեշնլի Հայաստանյան ներկայացուցչության, ԱՄՆ Միջազգային Ջարգացման Գործակալության և ԱՄՆ կառավարության տեսակետների հետ: